Կարգապահական գործ թիվ ԿԳ-15175

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի հուլիսի 28-ի թիվ 110-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/76-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՅԿ ՕՍԵՓՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ նաև Պալատ)** խորհուրդը՝ նախագահող փաստաբան Սիմոն Բաբայանի, անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Կարեն Մեժլումյանի, Կարապետ Աղաջանյանի, Լիպարիտ Սիմոնյանի և Նելլի Հարությունյանի կազմով, քարտուղարությամբ Պալատի կարգապահական գործերը համակարգող՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան՝ Հայկ Օսեփյանին (արտոնագիր 1144) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և վարույթի նախապատմությունը</u>

Քաղաքացի Կարապետ Յափուջյանը **(այսուհետ նաև՝ Դիմող),** դիմելով Պալատ**,** հայտնել է, որ թիվ ԵԿԴ/2858/02/11 քաղաքացիական գործով փաստաբանական ծառայություններից օգտվելու նպատակով, դիմել է փաստաբան Հայկ Օսեփյանին, սակայն կողմերի միջև չի կնքվել ծառայությունների մատուցման պայմանագիր, քանի որ ինչ-ինչ պատճառներով փաստաբանը չի ցանկացել դա անել:

Ըստ Դիմողի՝ գործի սկզբնական փուլում ամեն ինչ հարթ էր ընթանում՝ փոխադարձ հարգանքի և վստահության հիման վրա: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.01.2014թ. որոշման արդյունքում բեկանվեց առաջին ատյանի դատարանի 02.08.2013թ. վճիռը և գործն ուղարկվեց նույն դատարան՝ նոր քննության, ինչի արդյունքում նույն դատարանի 20.06.2014թ. վճռով Դիմողի հայցը մերժվեց:

Դիմողի խոսքով, բնականաբար, պետք է ներկայացվեր վերաքննիչ բողոք մեկ ամսվա ընթացքում, և այդ կապակցությամբ Դիմողը վճարել է պետական տուրքի գումարը, և այն ներկայացրել է փաստաբանին: Դիմողը հայտնել է, որ վերաքննիչ բողոք ներկայացնելու վերջնաժամկետը 2014 թվականի հուլիսի 20-ին էր, և ինքը վստահ էր, որ փաստաբանը ներկայացրել է վերաքննիչ բողոքը: Պարբերաբար զանգել է փաստաբանին՝ հարցնելով, թե ինչու է ուշանում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը, իսկ փաստաբանն ասել է, որ հավանաբար

արձակուրդային շրջան է, միգուցե դրանով է պայմանավորված որոշման ուշացումը: Դիմողը նշել է, որ որոշ ժամանակ ևս սպասել է և 2014թ. սեպտեմբեր ամսին նորից հարցրել է փաստաբանին, թե ինչ եղավ վերաքննիչ բողոքը, սակայն, ըստ Դիմողի, փաստաբանը նորից պատասխանել է, որ դատավորները ծանրաբեռնված են: Դիմողը նույն պատասխանը փաստաբանից ստացել է նաև 2014թ. հոկտեմբերի վերջին:

Դիմողը հայտնել է, որ հետագայում տեղեկացել է «Դատալեքս» տեղեկատվական կայքի մասին, և իր որդու օգնությամբ, պարզել է, որ իր գործով որևէ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, իսկ առաջին ատյանի դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ: Այդ տեղեկատվությունն այնուհետև Դիմողին վերահաստատել են ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանից, իսկ փաստաբանը խոստովանել է, որ բանավոր պայմանավորվածություն է ունեցել Պատասխանողի ներկայացուցչի հետ չներկայացնել վերաքննիչ բողոք, որի դիմաց Պատասխանողի ներկայացուցիչը հայտնել է, որ Պատասխանողն ամենակարճ ժամկետում պատրաստ է վճարելու պահանջվող գումարը: Սակայն, 2014 թվականի նոյեմբեր ամսից մինչ դիմում ներկայացնելը, Դիմողի խոսքով, որևէ գումար ինքը չի ստացել, իսկ արդեն տևական ժամանակ է, նա չի կարողանում կապ հաստատել փաստաբանի հետ:

Դիմողը նաև հայտնել է, որ արդեն երկու ամիս է, որ նա չի կարողանում նույնիսկ հեռախոսազանգով կապվել փաստաբան Հայկ Օսեփյանի հետ՝ իր գործի վերաբերյալ, մասնավորապես Պատասխանող կողմի տրված խոստումների կատարման ընթացքի վերաբերյալ, տեղեկություն ստանալու նպատակով: Դիմողը նաև նշել է, որ փաստաբան Հայկ Օսեփյանի գրասենյակը, որը գտնվում է Շենգավիթ վարչական շրջանում, միշտ փակ է:

Դիմելով Պալատ՝ Կարապետ Յափուջյանը խնդրել է կարգապահական վարույթ հարուցել փաստաբան Հայկ Օսեփյանի նկատմամբ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 27.11.2015թ. թիվ 356-Ա/ԿԳ-15175 որոշմամբ փաստաբան Հայկ Օսեփյանի (արտոնագիր թիվ 1144) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 3.6.1. ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով: Կարգապահական վարույթի հարուցումը դիմումում նշված մյուս հիմքերով մերժվել է՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքի բացակայության, ինչպես նաև կարգապահական վարույթ հարուցելու համար «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

01.12.2015թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Համլետ Ստեփանյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Դիմողը հայտնել է, որ թիվ ԵԿԴ/2858/02/11 քաղաքացիական գործով փաստաբանական ծառայություններից օգտվելու նպատակով դիմել է փաստաբան Հայկ Օսեփյանին:

Ըստ Դիմողի՝ գործի սկզբնական փուլում ամեն ինչ հարթ էր ընթանում՝ փոխադարձ հարգանքի և վստահության հիման վրա: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.01.2014թ. որոշման արդյունքում բեկանվեց առաջին ատյանի դատարանի 02.08.2013թ. վճիռը, և գործն ուղարկվեց նույն դատարան՝ նոր քննության, ինչի արդյունքում նույն դատարանի 20.06.2014թ. վճռով Դիմողի հայցը մերժվեց:

Դիմողը հայտնել է, որ արդեն երկու ամիս է, որ նա չի կարողանում նույնիսկ հեռախոսազանգով կապվել փաստաբան Հայկ Օսեփյանի հետ իր գործի վերաբերյալ՝ մասնավորապես Պատասխանող կողմի տրված խոստումների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով: Դիմողը նաև նշել է, որ փաստաբան Հայկ Օսեփյանի գրասենյակը, որը գտնվում է Շենգավիթ վարչական շրջանում, միշտ փակ է:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Պատասխանողը հայտնել է, որ դեռևս 2013 թվականին հասարակական հիմունքներով (պայմանագրային հարաբերություններ չեն եղել) լիազորվել է Կարապետ Յափուջյանի կողմից թիվ ԵԿԴ/2858/02/11 քաղաքացիական գործով վերջինիս շահերը դատական ատյաններում ներկայացնելու համար: Գործի նյութերին ծանոթանալուց հետո, ինչպես նաև գործի ամբողջ քննության ընթացքում իր համար ակնհայտ է եղել, որ վստահորդի կողմից ներկայացված պահանջն անհիմն է, քանի որ թիվ ԵԿԴ/2858/02/11 քաղաքացիական գործով պատասխանողի կողմից գումարային պարտավորություն ունենալու վերաբերյալ գրավոր որևէ ապացույց չի եղել, այսինքն՝ ամբողջ քաղաքացիական գործը կառուցված է եղել միայն քրեական գործով թիվ ԵԿԴ/2858/02/11 քաղաքացիական գործով պատասխանողի բացատրության հիման վրա, ով քրեական գործով նույնպես չի ընդունել Կարապետ Յափուջյանի հանդեպ գումարային պարտավորություն ունենալու փաստը: Փաստաբան Հայկ Օսեփյանը հայտնել է, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վստահորդը տարեց մարդ է, կենսաթոշակառու է, ինքը պատրաստակամություն է հայտնել հնարավորինս ապահովել դատական ատյաններում վերջինիս իրավունքների պաշտպանությունը: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 02.08.2013 թվականի վճռով հայցն ըստ էության մերժվել է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ և 48-րդ հոդվածներով սահմանված կարգով հայցապահանջն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

Պատասխանողը նշել է, որ թեև իր վերաքննիչ բողոքի հիման վրա վերը նշված վճիռը բեկանվել էր և ուղարկվել նոր քննության (հիմքում դրվել էր քրեական գործի նյութերը դատարանի կողմից ուսումնասիրված չլինելու փաստարկը), սակայն գործի նոր քննության արդյունքում Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, մեկ այլ կազմով, հայցը կրկին մերժել է՝ հայցապահանջն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

Ըստ Պատասխանողի նշվածի մասին տեղյակ է եղել Կարապետ Յափուջյանը, քանի որ վերջինս ներկա է եղել բոլոր դատական նիստերին, իսկ ինքը՝ որպես Կարապետ Յափուջյանի ներկայացուցիչ, վերջինիս տեղեկացրել է այն մասին, որ ներկայացված հայցապահանջը չի կարող բավարարվել, քանի որ գործող օրենսդրությամբ որոշ փաստեր ապացուցված են համարվում միայն դրա համար սահմանված ապացույցներով և գումարային պարտավորություն ունենալու մասին հայտարարելը չի կարող պահանջի բավարարման համար հիմք հանդիսանալ:

Ըստ Պատասխանողի՝ թեև ինքը հավատացել է իրականում պարտքի առկայության մասին, սակայն քաղաքացիական գործի շրջանակներում արդյունքի բացակայության պատճառով հրաժարվել է այլևս Կարապետ Յափուջյանի ներկայացուցիչը լինել դատական ատյաններում: Սակայն, մի քանի օր անց Կարապետ Յափուջյանը պնդել է գործի քննությունը շարունակելու խնդրանքը: Հասկանալով, որ վեճի շարունակությունն անիմաստ է, այդ մասին ինքը հայտնել է իր վստահորդին, սակայն նա պարբերաբար զանգահարել և այցելել է իրեն՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու ակնկալիքով: Զանգերն եղել են այնքան հաճախակի (տասը րոպեում քսանից երեսուն զանգ), որ ինքը ստիպված է եղել դրանց այլևս չպատասխանել, քանի որ դրանք կրել են անիմաստ հետապնդման բնույթ: Այնուամենայնիվ, մտածելով, որ Կարապետ Յափուջյանը արժանի է հայցով պահանջվող գումարը (1.000 ԱՄՆ դոլար) որևէ ձևով ստանալ, ինչու չէ նաև նման իրավիճակից դուրս գալու կապակցությամբ, ինքն իր պատրաստակամությունն ու բարի կամքն է հայտնել անձնական միջոցների հաշվին վերջինիս վճարել այդ գումարը, քանի որ քաղաքացիական գործով դրական լուծման ակնկալիք չի տեսել, իսկ վստահորդի հետ շփումը վերածված է եղել ավելի մտերիմ հարաբերության: Ըստ Պատասխանողի՝ Կարապետ Յափուջյանը հրաժարվել է իր առաջարկից, նշելով, որ ինչու փաստաբանը վճարի մի անձի փոխարեն, ով իրականում իրեն պարտք է, առավել ևս, որ խոսքը ոչ այնքան փոքր գումարի մասին է:

Հետագայում իրեն համար անհայտ պատճառով Կարապետ Յափուջյանը դիմել է Պալատ:

Պատասխանողը հայտնել է, որ չի ցանկանում որևէ այլ անդրադարձ կատարել եզրակացությանը, և նշել, որ հեռախոսազանգերին չպատասխանելը կրել է ոչ թե վստահորդի որևէ իրավունքը սահմանափակելու բնույթ, այլ «փաստաբան-վստահորդ» հարաբերություններն, որպես այդպիսին, դադարած լինելու պայմաններում՝ անիմաստ է եղել և առարկայազուրկ:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

29.01.2016թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որի համաձայն ապացուցման ենթակա փաստեր են համարվում կողմերի միջև փաստաբան-վստահորդ հարաբերությունների պարագայում՝ Դիմողի կողմից Պալատ դիմում ներկայացնելուն նախորդող երկու ամսից ավելի ժամանակահատվածում Դիմողի համար փաստաբանի ոչ մատչելի լինելու հանգմանքը (Դիմողը չի կարողացել հեռախոսակապ հաստատել փաստաբանի հետ, փաստաբանի գրասենյակը անընդհատ փակ է եղել, փաստաբանը խուսափել է վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին տեղեկացնել, նրան հետաքրքրող հարցերին պատասխանել)

02.02.2016թ.գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի մարտի 03-ին, ժամը՝ 18:30-ին, 2016 թվականի մայիսի 03-ին, ժամը՝ 18:30-ին, 2016 թվականի մայիսի 24-ին, ժամը՝ 18:30-ին, 2016 թվականի հուլիսի 07-ին, ժամը՝ 18:45-ին և 2016 թվականի հուլիսի 28-ին, ժամը՝ 18:15-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան,

Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- Դիմողի և Պատասխանողի միջև 11.06.2013թ. մինչև 11.06.2015թ. առկա են եղել փաստաբան-վստահորդ հարաբերություններ,
  (հաստատվում է Դիմողի կողմից տրված 11.06.2013թ. լիազորագրի պատճենով).
- Պատասխանողը Դիմողի շահերի պաշտպանության նպատակով ներկայացուցչություն է իրականացրել թիվ ԵԿԴ/2858/02/11 քաղաքացիական գործով,
  (հաստատվում է Դիմողի և Պատասխանողի բացատրություններով).
- Դիմողը հեռախոսի միջոցով կապ է հաստատել Պատասխանողի հետ հիմնականում իրեն պատկանող 093-20-04-61 հեռախոսահամարից և զանգահարել է Պատասխանողին պատկանող 096-46-22-14 հեռախոսահամարին,
  (հաստատվում է Դիմողի Խորհրդին տրված բացատրությունով).
- 2015 թվականի հունիս-օգոստոս ամիսներին ընկած ժամանակահատվածում, Պատասխանողի և Դիմողի միջև տեղի է ունեցել հեռախոսային խոսակցություն:
  (հաստատվում է ՝ Դիմողի կողմից ներկայացված «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի կողմից տրված մանրամասն հաշվով).

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 22.03.2016թ. տրամադրված ՈԸԴՂ/ԿԳ/283-16 տեղեկանքի համաձայն Հայկ Օսեփյանը արտոնագիրը ստացել է 22.11.2010թ.: Հայկ Օսեփյանի նկատմամբ 2010-2016թթ ժամանակահատվածում մեկ անգամ հարուցվել է կարգապահական վարույթ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար, որը կարճվել է արտոնություն կիրառելու հիմքով:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հայկ

Օսեփյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման, հետևյալ պատճառաբանությամբ.

2013 թվականի հունիսի 11-ից սկսած Դիմողի և Պատասխանողի միջև երկու տարվա ընթացքում առկա են եղել փաստաբան-վստահորդ հարաբերություններ: Պատասխանողը ներկայացուցչություն է իրականացրել թիվ ԵԿԴ/2858/02/11 քաղաքացիական գործով: Դիմողի պնդմամբ մինչ Պալատ դիմում ներկայացնելը շուրջ երկու ամիս չի կարողացել նույնիսկ հեռախոսով կապվել փաստաբան Հայկ Օսեփյանի հետ:

Կանոնագիրքի 3.6.1.-րդ ենթակետի համաձայն *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Դիմողը նշել է, որ մինչև Պալատ դիմում ներկայացնելը շուրջ երկու ամիս չի կարողանում նույնիսկ հեռախոսազանգով կապվել փաստաբան Հայկ Օսեփյանի հետ իր գործի վերաբերյալ՝ մասնավորապես Պատասխանող կողմի տրված խոստումների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով: Դիմողը նաև նշել է, որ փաստաբան Հայկ Օսեփյանի գրասենյակը, որը գտնվում է Շենգավիթ վարչական շրջանում, միշտ փակ է: Ի ապացույց վկայակոչած հանգամանքների Դիմողի կողմից Խորհրդին ներկայացվել է հեռախոսազանգերի վերծանում, որտեղ այդ հանգամանքը հիմնավորող տեղեկատվություն առկա չէր: Ավելին, նշված փաստաթղթում առկա է տեղեկատվություն առ այն, որ 2015 թվականի տարբեր ժամանակահատվածներում Պատասխանողի և Դիմողի միջև տեղի է ունեցել հեռախոսային խոսակցություն, խոսակցությունը տեղի է ունեցել նաև օգոստոս ամսին, մասնավորապես՝ օգոստոսի 29-ին ժամը 12:40-ին:

Նշվածին պետք է հավելել, որ Պատասխանողի կողմից Խորհրդին ներկայացվել է ապացույց ըստ որի իր և Դիմողի միջև փաստաբան-վաստահորդ հարաբերությունները 11.06.2015թ. դրությամբ արդեն իսկ դադարած են եղել: Այսինքն, այն ժամանակահատվածում, երբ ըստ Դիմողի ինքը նույնիսկ հեռախոսազանգով չի կարողացել կապվել փաստաբանի հետ և որ վերջինիս գրասենյակը միշտ փակ է եղել, փաստաբան-վաստահորդ հարաբերությունները արդեն իսկ դադարած են եղել:

Դիմողի կողմից Խորհրդին այդպես էլ չներկայացվեց որևէ այլ ապացույց, որը կհիմնավորեր վերջինիս կողմից վկայակոչված հանգամանքները:

Կանոնագիրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (այսուհետ՝ Կարգ) 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:*

Կարգի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:*

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը.*

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դիմողի կողմից սույն կարգապահական վարույթի ընթացքում այդպես էլ չհիմնավորվեց իր կողմից վկայակոչած

հանգամանքները, ուստի տվյալ պայմաններում չի հիմնավորվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը, հետևաբար, սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետով, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Պալատի կանոնադրությամբ, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 27.11.2014թ. թիվ ԿԳ-356-Ա/ԿԳ-15175 որոշմամբ՝ փաստաբան Հայկ Օսեփյանի (արտոնագիր 1144) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայան